ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ.՝ (226) 43434,
Էլ. փոստ՝ charentsavan.kotayq@mta.gov.am

ՀՀ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ, Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ
3-ՐԴ ԹԱՂ., 14-ՐԴ ՇԵՆՔ, 3-ՐԴ
ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ
ՏԻԳՐԱՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

N 566-22
18 ապրիլ 2022թ.

Ի պատասխան 15.03.2022թ. թիվ 8/22 հանրագրում բարձրաձայնված հարցերի հայտնում ենք, որ համայնքի ղեկավարի կարգադրությունները չեն հրապարակվել համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում, քանզի լինելով ներքին (լոկալ) բնույթի նորմատիվ ակտեր, մեծամասամբ պարունակել են անձնական տվյալներ, որոնց հրապարակումը արգելվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով:

Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգում (ՀԿՏՀ) տեխնիկապես ի սկզբանե նախատեսված չի եղել կարգադրությունների ֆիլտրման հնարավորություն՝ դրանք հրապարակային կամ ոչ հրապարակային ձևաչափով տեղադրման համար:

Չարենցավանի համայնքապետարանը պաշտոնապես դիմել է ՀԿՏՀ-ն կառավարող կազմակերպությանը՝ «Տեղեկատավական Համակարգերի Զարգացման և Վերապատրաստման Կենտրոն» ՀԿ-ին, համապատասխան ծրագրային կարգավորումներ տալու համար, որոնց ներդրումից հետո լրացուցիչ կիրազեկենք:

Իսկ ավագանու նիստերի և այլ միջոցառումների անցկացման ընթացակարգերի չպահպանման, դրանց չհանրայնացման և չլուսաբանման վերաբերյալ դիտողությունը անհիմն է, քանի որ օրենսդրությամբ անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը պարտադիր զետեղվում է համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում և ֆեյսբուքյան էջում:

Ավագանու նիստերը պարտադիր հեռարձակվում են առցանց, բացառությամբ համացանցի խաթարման հետ կապված տեխնիկական խնդիրներ առաջանալու դեպքերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Կատ. աշխատակազմի քարտուղար՝ Ս. Մուրադյան